331.881 24936
Ըի-57
05 JAN 2010

*Պրոլետարներ բոլոր յերկրների միացե՛ք!*

ԱՆԴՐԿՈՎԿ. ՊՐՈՖՄԻՈՒԹՅՈՒՆ

# ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ՅԵՐԿԱԹՈՒՂԱՅԻՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ԿԱՅԱՐԱՆՆԵՐԻ, ԴԵՊՈ-ՆԵՐԻ, ԱՐՎԱՐՁԱՆՆԵՐԻ, ԳՈՐԾԱՐԱՆՆԵՐԻ ՑԵԽԵՐԻ ՅԵՎ ԱՅԼ ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ԳՅՈՒՏԱՐԱՐՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ԲՋԻՋՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՅԻՎ ԿԱՐԳԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ։

Հաստատակուբյուն Ցեrկ. Միուբյան Կ. Կ.

...ԿՈՒԹՅՈՒՆ
...ՇՐՈՄԱ»-Ի

ԹԻՖԼԻՍ
1935

ՀՍՍՀ-ССР

13.02.2013
24936

Համագումարն ընդունում է տրանսպորտի ապրանքաշրջանառության հիմնական տեսակների հետեվյալ չափանիշը. յերկաթուղայինը—

169 մլրդ. տոնն-կլմ. 1932 թ.
մինչ 300 մլրդ. տոնն-կլմ. 1937 թ:

*(Հ. Կ. Կ.) XVII համագումարի վորոշումներից*

*Տպարան «ՏԵԽՆԻԿԱ ԴԱ ՇՐՈՄԱ»*

*Պատվեր 161. Գլավլիտ ա 505. Տիրաժ 500.*

331.881
Ա-57
3622

Չկան այնպիսի ամրություններ, վորոնց բոլշեվիկները չկարողանային տիրապետել: ՍՏԱԼԻՆ

# ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Յերկաթուղային տրանսպորտի կայարանների, դեպոների, արվարձանների, գործարանների ցեխերի յեվ այլ արտադրությունների, գյուտարարների միության կազմակերպությունների բջիջների աշխատանքի յեվ կարգի վերաբերյալ:

## I. ԲՋԻՋՆԵՐԻ ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

1. Յերկաթուղային տրանսպորտի գյուտարարների միության բջիջները հանդիսանում են ստորին հիմնական կազմակերպություններ և գործում են ՑՈՒ-ի պրոֆմիությունների, կուսակցական կազմակերպությունների ճանապարհային և բազային

խորհուրդների դիրեկտիվների հիման վրա
և նրանց հետ համաձայնեցրած ձևով։

## II. ԲՋԻՋՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՅՈՒԹՅՈՒՆԸ

2. Բջիջների գործնական գործունեյու-
թյունը պետք է ուղղված լինի դեպի իրենց
արտադրությունների տեխնիկայի լավաց-
ման և կատարելագործման կողմը, բջիջնե-
րի պարտականությունների մեջ մտնում են՝

1. Հայտնաբերել արտադրության մեջ նե-
կառվող տեխնիկական հետամնացությունն-
ներ, աշխատելով փոխարինել ավելի լավա-
գույն միջոցներով, բարձրացնել աշխատան-
քի արտադրողականությունը, լավացնել ար-
տադրանքի որակը և թեթևացնել բանվորի
աշխատանքը (այս նպատակով բջիջները
պարտավոր են ուսումնասիրել տվյալ ար-
տադրության գյուտարարության և ռացիո-
նալիզացիայի պահանջների վրա հիմնված
վերակառուցման պլանը)։

2. Բարձրացնել անդամների որակա-
վորման և տեխնիկայի մակարդակը, աշխա-



տելով իր ամենօրյա ստեղծագործական աշ-
խատանքով կապվել գիտական-հետազոտա-
կան և ռացիոնալիզատորական օրգանների
աշխատանքի հետ, հարվածային բրիգադնե-
րի և արտադրական խորհրդակցությունների,
ուղղել գյուտարարների միտքը յերկաթու-
ղային տրանսպորտի և տվյալ արտադրու-
թյան վերակառուցման հիմնական հարցերի
կողմը, ձեռք առնել միջոցներ սոց. պատ-
վերների ղեկավար հիմնարկներից գյուտա-
րարի ձեռքը հասցնելու կապակցությամբ
անհրաժեշտ բացատրությունների հետ միա-
սին։

3. Արտադրություններում տեղի ունե-
ցող տեխնիկական պակասությունները յե-
րևան հանելու մասով գյուտարարներից
կազմակերպել հատուկ բրիգադներ։

4. Անկախ այն բանից՝ առաջարկը յե-
կել է տվյալ արտադրությունում աշխատո-
ղի կողմից թե ոչ, աջակցել գյուտարար
հիմնարկներին օգտավետ գյուտերի ձևա-
կերպման և կատարելագործման գործում։

5. Հսկող կազմակերպությունը և հասարակական կոնտրոլը, յերիտկոմ կազմակերպության և թեթև կավալերիայի հետ միասին պետք է ժամանակին իրականացնեն ընդունված առաջարկներն ու գյուտերը:

Կարևորագույն գյուտարարությունների վրա կազմակերպել շեֆություն, հայտնաբերել տեղ գտած թափթփածություն, անուշադիր վերաբերմունք գյուտարարների և նրանց իրավունքների վերաբերյալ: Նախաձեռնել և կազմակերպել ցուցադրական դատեր գյուտարարության գործը խանգարողների համար: Կրթական աշխատանք տանելով անդամների շարքերում:

6. Հասկանալի դարձնել գյուտարարության վերաբերող դիրեկտիվային ցուցմունքները. կուսակցության և կառավարության վորոշումները գյուտարարների դըրված արտոնությունների վերաբերյալ, պրոպագանդա մղել կոլեկտիվ ձևով գյուտարարությունը զարգացնելու գծով, կազմակեր-



պել դասընթացքներ, յերեկույթներ և հարց ու պատասխաններ:

7. Կազմակերպել ոգնության և աջակցության գործը գյուտարարության գծով հարվածային բրիգադների միջև ռացիոնալիզ. խմբերում և արտադրական խորհուրդներում:

Սոցմրցման զարգացման գործում աջակցություն ցույց տալ, կազմակերպել կոլեկտիվ գյուտարարություններ այդ գծով խոշոր աջողություն ունենալու կապակցությամբ:

8. Ադմինիստրացիայի հետ միասին կազմակերպել եքսպերտ այն դեպքերում, յերբ հեղինակների գաղափարն ու առաջարկը, տարած աշխատանքը խեղաթյուրվում և մնում է առանց հետևանքի, հակառակ դըրված գրական տեղեկանքների:

9. Գյուտարարներին ցույց տալ աջակցություն եսքիզների և չերտեժների ձևակերպման ու մշակման գործում, սահմանել հատուկ դիտող կայաններ և կազմակերպել

բրիգադներ գյուտարարության գործերի առաջ մղումն իրականացնելու վրա հսկելու մտքով և տնտեսական էֆեկտը հայտնաբերելու համար:

10. Իրավասության տեսակետից աջակցություն ցույց տալ անդամներին. հեղինակության վկայականի հայտը, վեճերի դեպքում մասնակցել հարցերի վորոշմանը, հեղինակության շուրջը բացված վեճերը քննելիս աջակցել անդամներին՝ ստանալ որենքով սահմանված պարգևն ու վարձատրությունն: Խրախուսել նրանց ստեղծագործությունը և աջակցել գյուտարարության հետ կապված հավաքական պայմանագրերը կնքելու գյուտարարների և ձեռնարկատերերի միջև:

11. Կազմակերպել արտադրողական խըմբակներ և գյուտարարների ու գիտական աշխատողներից կազմված կոլեկտիվներ, առանձնակի գյուտարարների ստեղծագործությունների մշակման համար, թույլ չտալով դիմազուրկ անելու գյուտարարին, վորի առաջարկի վրա աշխատում է կոլեկտիվը. բացի դրանից հայտնաբերում է թե ամեն մի աշխատող անդամ վոր աստիճան է աշխատում խրախուսելու գծով:

12. Գյուտարարությանն ոգնող մարմինների և պրոֆմիությունների միջոցով ձեռք առնել միջոցներ այն մասին, վոր իրենց առանձին ուշադրության արժանի առաջարկների մշակման և իրականացման ժամանակ գյուտարարները ազատ թողնվեյին իրենց հիմնական աշխատանքներից—պահպանելով իրենց միջին թվի ռոճիկը հիմնարկության կամ տնտեսական միության հաշվին, վորոնք շահագրգռված են տվյալ առաջարկի իրականացման գործով:

13. Կազմակերպել նման բնավորության ուրիշ հիմնարկի միջև տեխնիկական և գյուտարարական աջող փորձերի փոխանակում:

14. Սեփական ներկայացուցիչների միջոցով մասնակցել գյուտարարությամբ պարապող կազմակերպությունների և հիմնարկների աշխատանքներին:

15. Աջակցել աչքի ընկնող գործունյա և ոգտավետ գյուտարարներին տեղափոխելու այն ցեխերը, վորտեղ տարվում են գյուտարարության հատուկ մասնագիտական փորձնական աշխատանքներ, այլև կոնստակտորային բյուրոներ իր հիմնարկության գիտա-տեխնիկական օրգաններ և գիտա-հետազոտական խմբակներ:

16. Առաջ մղել գյուտարարներին մշտական աշխատանքի իր և ուրիշ հիմնարկի ռացիոնալիզատորական և գյուտարարության օրգաններում:

17. Տեխնիկական փորձերի փոխանակում կատարելու միջոցով կազմակերպել գործուղումներ դեպի ցուցահանդեսներ, եքսկուրսիաներ, տեխնիկական օրինակելի հիմնարկներ, գյուտա-հետազոտական ինստիտուտներ և արտասահմանյան ու այլ գործուղումներ:

18. Աջակցություն ցույց տալ գյուտարարներին, առաջին հերթին ուղարկել տեխնիկական ուսման և վինվորական դպրոցներ (ՎՈՒԶ):



## III. ՅԵՐԿԱԹՈՒՂԱՅԻՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ԳՅՈՒՏԱՐԱՐՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԸ ՈՏԱՐՅԵՐԿՐՅԱ ԲԱՆՎՈՐՆԵՐԻ ՅԵՎ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻ ՄԻՋԵՎ

1. Բջիջը մասսայական աշխատանքը ծավալում է մեծ քանակով ոտար բանվորներ և մասնագետներ ներգրավելու գյուտարարների միությանը անդամագրելու մըտքով:

2. Զանազան գործարաններում ոտար բանվորների և մասնագետների միջև սոց. պայմանագիր կնքելու միջոցով անցկացնել կոմպանիա այլև կազմակերպել անհատական (ինդիվիդուալ) մրցակցություն առանձնապես տնտեսական պայքարի և պրոդուկցիայի վորակի լավացման գծով:

3. Բոլոր հիմնարկներում և գործարաններում, պատի լրագրերում և տեղային մամուլում, դիագրամներում ու առանձին

բյուլետեններում սիստեմատիկորեն լուսաբանել ոտար բանվորների միջև առաջ տարվող սոցմրցման և հարվածայնության ընթացքի մասին գյուտարարության և ռացիոնալիզացիայի գծով։

4. Լայն կերպով տարածել ոտար բանվորների և մասնագետների միջև և հասկանալի դարձնել իմպորտային մատակարարման պլանի էությունը, հնարավորություն տալով ոտար բանվոր կոլեկտիվին միջոցներ ձեռք առնել իմպորտի նվազեցման գծով փոխարինելով իմպորտային նյութերը և մատակարարումը խորհրդայինով։

5. Տեխնիկական փորձառության փոխանակության միջով հաջորդաբար կազմակերպել էքսկուրսիաներ ոտար բանվորների և մասնագետների համար՝ դեպի ուրիշ գործարաններ, շախտեր և ֆաբրիկաներ։

6. Լայն կերպով հասկանալի դարձնել ոտար բանվորների և մասնագետների համար Հ. Կ. Կ. (բ) Կ. Կ. գյուտարարության վերաբերյալ ունեցած վորոշումը 1930 թ.



26/X այլև գյուտարարների միության I համագումարի և պլենումի վորոշումը, և նրա կատարելագործության վերաբերող դիրեկտիվները, որենքն ու այն հրահանգը, վոր վերաբերում է վարձատրությանը։

7. Կազմակերպել սիստեմատիկ հսկողություն ոտար բանվոր մասնագետների կողմից արվող գյուտերի և կատարելագործությունների վերաբերյալ արվող առաջարկների ընթացքի վրա։

8. Ոտար բանվորների և մասնագետների կողմից արված առաջարկների վերաբերյալ տնտեսահիմնարկների կողմից բյուրոկրատական վերաբերմունք հայտնաբերված դեպքում կազմակերպել ցուցադրական դատեր և այլն, այդ մասին տեղեկություն տալով յերկաթուղ. տրանսպորտի Կ. Կ.։

## IV. ԲՋԻՋԻ ԿԱԶՄԸ

3. Բջիջները կազմվում են կամավորական հիմունքով գյուտարարների միության ան-

դամագրված անդամներից և ռացիոնալիզատորներից այլև այն բանվորներից, ծառայողներից, ուսանողներից, ինժեներ-տեխնիկներից և գիտական աշխատավորներից, վորոնք ակտիվ մասնակցություն են ունենում և աջակցում են գյուտարարական գործի զարգացմանը։

## V. ԲՋԻՋԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

4. Բջիջի յուրաքանչյուր անդամ ոգտվում է վճռողական ձայնի իրավունքով, կարող է ընտրվել բջիջի ղեկավար մարմինների և գյուտարարների կոնֆերենցիաների անդամ, վորպես ներկայացուցիչ կարող է ընտրվել գյուտարարների որգանների և հասարակական այնպիսի կազմակերպությունների անդամ, վորոնք գործում են նույն նպատակները իրագործելու գծով։

5. Բոլոր անդամներն էլ հավասար չափով բջիջի կողմից գտնում են պաշտպանություն՝ ինչպես հեղինակության վկայական ստանալու, նույնպես և իրենց առաջարկները արտադրության մեջ մտցնելու և առաջ մղելու գործում, այլև գիտական-տեխնիկական վորակը բարձրացնելու պաշտպանելու գծով։



6. Իր արտադրական աշխատանքի ընթացքում բջիջի ամեն մի անդամ պետք է ոգնություն հասցնե սոց. շինարարության գործին վոչ միայն անձնական տեխնիկական ստեղծագործությունով, այլ և հարվածային բրիգադների աշխատանքներին ակտիվ մասնակցություն ունենալով, նույնը և արտադրական խորհրդակցություններում ու հասարակական այլ կազմակերպություններում։

7. Միության անդամների ընդունելությունը կատարում է գյուտարարների կենտրոնը, բջիջի անդամների ընդհանուր ժողովը յերկաթուղ-տրանսպորտի գյուտարարների բազային խորհրդի հետագա հաշվառումով։

## VI. ԲՋԻՋԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

8. Գյուտարարների անդամների համար օրենքով ընդունված քանակի գոյությունը իրավունք է տալիս բջիջ կազմակերպելու։ Շրջանին (участок) ավելացված ջերմաշարժերի (тепловоз) և էլեկտրաշարժերի գոյության դեպքում դրանց կից հիմնվում են կանոնադրությունով նախատեսված գյուտարարների միության ինքնուրույն բջիջներ ստեղծելու, վորոնք անմիջականապես ենթակա յեն ճանապարհային խորհրդին։ Բջիջի ղեկավար մարմինը հանդիսանում է ընդհանուր ժողովը, վոր հրավիրվում է վոչ ուշ, քան ամիսը մի անգամ։ Ընդհանուր ժողովը օրինավոր է ճանաչվում բջիջի գործից ազատ անդամների $^2/_3$ մասնակցության դեպքում։ Ընդհանուր ժողովի քննության ենթակա յեն՝

1) բջիջի կազմի և վերստուգիչ հանձնաժողովի անդամների ընտրությունները.

2) խորհրդի և վերստուգիչ հանձնաժողովի (անդամների) գործունեության հաշիվների քննելն ու հաստատելը.



3) բջիջի աշխատանքի պլանի և նրա ֆինանսային առաջարկների և նախահաշվի քննությունն ու հաստատումը.

4) ղեկավարների և առանձին ընկերների իրենց տարած աշխատանքների մասին արած զեկուցումների այլև բջիջի աշխատանքների համար ընդունված պլանի կատարումի լսելը և այլն.

5) բջիջի անդամների հասարակական դիսցիպլինայի պահպանության գծով միջոցառումների մշակում.

6) կնքել սոց-մրցման պայմանագրեր.

7) առանձին գյուտարարների վրա շեֆություն հաստատել.

8) բջիջի աշխատանքների հետագա զարգացման և խորացման գծով ընդունել վորոշումներ և ձեռք առնել համապատասխան միջոցառումներ.

9) բջիջի աշխատանքների կազմակերպման և [illegible]վարության, այլև

4008
3622
Гос. Публ. Библиотека ՀՍՍՀ-ССР им. А. Мясникяна Ա. Մյասնիկյանի անվ.

բոլոր ընթացիկ և գործադիր աշխատանքների իրականացման համար ընդհանուր ժողովը ընտրում է նախագահ կամ բջիջի խորհուրդ.

10) Նախագահը կամ խորհուրդը մեկ ընդհանուր ժողովից մինչև մյուսը հանդիսանում է բջիջի ղեկավար մարմինը։ Բջիջի կազմը՝ յեթե նրա միության անդամների թիվը 30-ից անց է, ընտրվում է 3 հոգուց կազմված խորհուրդ, իսկ 50-ից ավելի անդամ ունենալու դեպքում ընտրվում է 5 հոգուց բաղկացած խորհուրդ։ Խորհուրդը ընտրվում է մեկ տարվա ժամանակամիջոցով։ Խորհրդի աշխատանքի անընդունակության դեպքում պետք է լրիվ կամ մասնակի վերընտրություն կայացնել չսպասելով նրանց ընտրվելու ժամանակամիջոցի լրանալուն։ Խորհուրդը, միության բարձրագույն մարմինների կամ հաղորդակից պրոֆմիության ցուցմունքով կարող է արձակված համարվել, 30-ից պակաս անդամ ունեցող բջիջը



խորհուրդ չի ընտրում, այլ ջոկվում է մի նախագահ բջիջի աշխատանքները ղեկավարելու համար.

11) միևնույն հիմնարկության մեջ ցեխային կամ հերթային աշխատանքների գոյության դեպքում գյուտարարների միության բջիջները ջոկում են կազմակերպիչներ, վորոնք ընտրվում են տվյալ ցեխի անդամների ընդհանուր ժողովում և գործում են միության խորհրդի ղեկավարությամբ։ Խորհուրդը ընտրվում է գյուտարարների ընդհանուր ժողովում և ղեկավարվում տվյալ հիմնարկության գյուտարարների բջիջների դիրեկտիվներով։ Խորհուրդը իր միջից ընտրում է նախագահ.

12) բջիջների խորհուրդը, բացի բջիջների գործունեությունը բնորոշող բաժնում տված ցուցմունքներից, իրականացնում է հետևյալ աշխատանքները՝

ա) միության անդամների մեջ առաջ է տանում կրթական աշխատանք և բարձրացնում տեխնիկական վորակավորումը.

բ) միության բջիջների և անդամների մեջ կազմակերպում է սոցիալիստական մըր-ցակցություն.

գ) մշակում է աշխատանքի և նախահաշվի պլանը, պաշտպանում նրա կատարումը և հսկողությունը, պրոֆ. և կուսկազմակերպությունների հետ համաձայնեցնում է աշխատանքի և նախահաշվի պլանը.

դ) միության բարձրագույն մարմինների կողմից դրված դիրեկտիվների և բջիջների ընդհանուր ժողովների կատարումն ու իրականացումը.

յե) տեղային հավաքույթների (слет) և զանազան կամպանիաների անցկացում և այլն.

զ) միության անդամների ընդունելությունը, վորոնց հաստատում է բջիջի ընդհանուր ժողովը, բջիջի անդամների հաշվառում.

է) համապատասխան շքանշաններով (Լենինի, աշխատանքի և այլ) բջիջի անդամներին պարգևատրելու և դրամով վարձատրելու համար միջնորդություն հարուցել ուր հարկն է և հաշվի առնել առաջադրվածներին.



ը) կազմակերպել գյուտարարներից տեխնիկա իրավասու կոնսուլտացիա.

թ) կազմակերպել հասարակական հսկողության խմբակներ առանձին գյուտարարների ընթացքի համար.

ժ) հավաքագրել ակտիվը, կամավորներ, մասնակից անելով նրանց բջիջի աշխատանքներին ակտիվորեն, հաշվի առնելով նրանց տարած աշխատանքները.

ժա) անդամատոմսերի բաժանումը, անդամավճարներից և այլ մուտքերից գոյացած դրամների գանձում.

ժբ) միության ժուռնալների և համապատասխան գրականության տարածում, լույս ընծայել պատի լրագրի հատուկ համարներ, առանձին բաժին հատկացնելով գյուտարարության.

ժգ) ստուգել և լրացնել տրանսպորտային գրադարանների տեխնիկական բաժինները,

աջակցություն ցույց տալով գյուղատնտեսության վերաբերող գրականության տարածման գործում.

ժդ) բջիջների գումարների ծախսումը և ֆինանսային առաջարկների ու նախահաշիվների կազմումը, ձեռք առնել միջոցներ բջիջի ֆինանսային բազայի ամրացման կապակցությամբ այլ և վարել բջիջի դրամարկղային և գույքի գործերը.

ժե) բջիջի խորհուրդը իր կազմից ջոկում է մի ներկայացուցիչ, վորը վարում է բջիջի բոլոր կազմակերպչական, տնտեսական և ֆինանսային գործունեությունը: Բջիջի ֆինանսային գործունեության վերաբերյալ ղեկավարվում են յերկաթուղային և բազային խորհուրդների, գյուղատարների կենտր. որգանի տված դիրեկտիվներով:

## VII. ՎԵՐԱՍՏՈՒԳԻՉ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Վերաստուգիչ հանձնաժողովում բջիջի անդամների քանակի համեմատությամբ ըն-



տրվում են 3—5 հոգի, 1—2 թեկնածուներով:

Յեթե բջիջի անդամների թիվը 25-ից պակաս չե, վերաստուգիչ հանձնաժողով չի ընտրվում, սրա ֆունկցիան կատարում է տեղկոմի վերաստուգիչ հանձնաժողովը: Վերաստուգիչ հանձնաժողովը գործում է նրա գործունեության կապակցությամբ գոյություն ունեցող կանոնադրության համաձայն:

---

Առաջին հնգամյակի ժամանակաշրջանում մենք կարողացանք կազմակերպել նոր շինարարության ենտուզիազմը, պաֆոս և կարողացանք հասնել վճռական հաջողության: Սա շատ լավ է:

Այժմս պետք է այդ բանը լրացնենք ենտուզիազմով, նոր գավոդներ և նոր տեխնիկայի յուրացումի պաֆոսով,-աշխատանքի արտադրողականության լուրջ բարձրացումով, ինքնարժեքի լուրջ իջեցումով:

Սրանում է այժմս գլխավորը:

Ընկ. Ստալինի զեկուցումից՝ արած Հ. Կ. Կ. (բ) Կ. Կ. Դ. Կ. Կ. Կ. 1933 թվի 7/I միացյալ պլենումում:

ՀԽՍՀ-ССР

Ա5-Ր4

ՀՀ Ազգային գրադարան
NL0197656

331.881:656.2
Ա-57